

Համանուններ անցնելիս /6-րդ դասարան/ կշռադատման փուլում նպատակահարմար է տալ շարադրանք՝ երկանդամ համանուններով:

Շարադրանքի օրինակներ

Թռռ – բազուկ

Տատիկը թռռան համար կարմիր բազուկով աղցան պատրաստեց, որպեսզի թռռնիկն ուտի ու հաղթ բազուկներ ունենա: Պապն էլ խոստացավ, որ առավոտյան կվերցնեն թռռը ու միասին կգնան ձկնորսության:

Արևոտ օր էր: Նավակը լողում էր լճակի մեղմօրոր ջրերի վրա: Պապն ու թռռը թռռը նետել էին ջուրը և սպասում էին, որ ձկնիկը կույ տա խայխոն ու ընկնի ծուղակը: Քիչ հետո թռռնիկը տեսավ, թե ինչպես է պապն իր մկանուտ բազուկներով ջրից հանում ձկներով լի թռռը:

Ծաղիկ – ակ

Անծայրածիր դաշտում բացվել էին ծաղիկները: Մի նազելի աղջիկ անուշահոտ ծաղիկներ էր հավաքում մայրիկի համար, որպեսզի ուրախացներ նրան: Աղջկա դեմքի սպիներից երևում էր, որ մանուկ հասակում նա վարակվել էր ծաղիկ հիվանդությամբ: Հանկարծ նա սաստիկ ծարավ զգաց: Մոտեցավ աղբյուրի ակին և սառը ջուր խմեց: Իսկ երբ ձեռքով ուղղում էր մազերը, մատանու կապույտ ակը շողաց արևի ճառագայթների տակ և սուզվեց ջրի հատակը:

Ծաղիկ – այր

Մի արևոտ օր պատկառելի մի այր գբոսնում էր ծաղիկների մեջ: Հանկարծ հորդ անձրև սկսվեց: Ճիշտ է, նա պատսպարվեց այրի մեջ, բայց սաստիկ մրսեց ու անկողին ընկավ: Պարզվեց, որ նա վարակվել է ծաղիկ հիվանդությամբ: Բայց բժիշկների ջանքերի շնորհիվ պատկառելի այրը ամիսներ անց ոտքի կանգնեց:

Շարունակել շարադրանքը

1

1. Հրդեհ էր. տասհարկանի բարձրահարկը այրվում էր : Դրսում իրարանցում էր. բոլորն այս ու այն կողմ էին վազում, փորձում էին ամբոխի մեջ գտնել իրենց հարազատներին: Հանկարծ մի աղեկտուր ձայն ստիպեց բոլորին սթափվել. -Երեխա՛ս, երեխաս ներսու՛մ է, խնդրում եմ, փրկե՛ք...

2

Մի պահ սարսափից քար կտրեցի. վերևի հարկից ոտնաձայներ էին լսվում: Կասկած չկար. տանը, ինձանից բացի, ինչ-որ մեկն էլ կար: Ես վերցրի ծեռքիս տակ ընկած առաջին իրը և վերև բարձրացա:

3

Դռները բացվեցին. մենք ներս մտանք: Ես սեղմեցի երրորդ հարկի կոճակը, իսկ նա՝ չորրորդ: Դռները փակվեցին, և վերելակը շարժվեց: Հանկարծ տարօրինակ ձայն լսվեց, լույսերը թրթռացին, ու վերելակը կանգ առավ: Ես մնացի մենակ այդ անձանոթ մարդու հետ:

4

Տիկին Մաթիլդն ու նրա ամուսինը ապրում էին շատ համեստ կյանքով: Սակայն Մաթիլդը միշտ երազում էր շքեղ հագուստի, ադամանդակուռ արդուզարդի մասին:

Մի օր նրա ամուսինը պարահանդեսի հրավեր բերեց: Տիկինը հրաժարվեց գնալուց՝ պատճառաբանելով, որ պատշաճ հագուստ չունի: Ամուսինը նրան տվեց իր խնայած դրամը, որ կինը պարահանդեսի համար նոր և շքեղ հագուստ գնի:

5

Սյուն ու Ջոաննան երիտասարդ նկարչուհիներ էին: Նրանք ընկերացել էին և մի սենյակ էին վարձել աղքատիկ թաղամասի եռահարկ շենքի վերին հարկում: Ջոաննան հիվանդ էր, և նրա պահվածքը անհանգստացնում էր Սյունին: Նա ոչինչ չէր ուտում, ոչնչով չէր հետաքրքրվում. շարունակ պառկած էր՝ դեմքով դեպի պատուհանը դարձած:

Մի օր էլ նա Ջոաննային ասաց, որ ինքը հաշվում է դիմացի տան պատին կառչած բաղեղի տերևները, որոնք աշնան քամուց օրեցօր պակասում են, ինչպես և իր կյանքի օրերը, ու երբ պոկվի վերջին տերևը, ինքն էլ կմեռնի:

Ջոաննան մտածում էր, թե ինչպես կարող է օգնել ընկերուհուն, և վերջապես գտավ ելքը:

Հորինել շարադրանքի սկզբը

1

-Տե՛ր իմ, ես պատահաբար վայր գցեցի ու կոտրեցի ձեր սիրած ծաղկամանը և հուսահատությունից ու վախից դրդված՝ որոշեցի ինքնասպան լինել: Խմեցի այն սափորի պարունակությունը, որի մասին դուք միշտ ասում էիք: Հիմա սպասում, սպասում եմ, բայց չեմ մեռնում:

2

Ամեն բան այնքան արագ կատարվեց: Մայր ծիծեռնակը ծղրտոցով դեռ պտտվում էր ամբարի շուրջը, իսկ մենք՝ երեխաներս, մի-մի փայտ առած, ամբարի տակ պտտեցնում էինք, որ կատվին վախեցնենք: Հետո մեկ էլ կատուն դուրս եկավ ու փախավ դեպի մարագը՝ դունչը լիզելով:

3

Երիտասարդը վազելով դուրս եկավ հյուրանոցի իր համարից և քայլերն ուղղեց դեպի դիմացի գարեջրատունը՝ քաջ գիտակցելով, որ ոստիկանները շուտով կսկսեն փնտրել իրեն: Բայց նա խաղաղ էր, իսկ դեմքին փայլում էր գոհունակության ժպիտը:

4

-Ես ամեն ինչ կանեն այնպես, ինչպես ուզում ես, միայն մի՛ հեռացիր,- բղավեց կինը:

Բայց պատասխանի փոխարեն լսվեց դռան շրխկոցը. տղամարդը հեռացավ և այս անգամ արդեն՝ ընդմիշտ:

5

Տղամարդուն հասցրին հիվանդանոց բացեց աչքերն ու հարցրեց իր դիմաց կանգնած կնոջը.

-Ո՞վ եք դուք:

-Ինչպե՞ս թե ով եմ, ես քո կինն եմ. մի՞թե ինձ չե՞ս հիշում:

- Ես ոչինչ չեմ հիշում, ես ոչինչ չգիտեմ: